Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18386
227

Ա. Սեհարոնեան
Գ. Պէրբ տանոնց
5-ր հ.
1906 թ.

891.99ղ
Ա-42

Переплетно-галантерейная
мастерская
Е. З. Тесь-Гроссман
Гоголевская ул. 22

10 NOV 2011
14 JUN 2005

Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

891.99
Ա-42

№ 9061.

ԳԱՅԼԵՐԸ ՈՐՆՈՒՄ ԷԻՆ

1001/189

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛІОТЕКА

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

227

ԹԻՖԼԻՍ

18386
5 .02. 2013

Տպարան Բուքաթելեանէ
1906

189 ֆ

ԳԱՅԼԵՐԸ ՈՌՆՈՒՄ ԷԻՆ

Անտառումն էինք աշնանային ուշ գիշերին։

Մեղմութեամբ՝ ինչպէս յուսաբեկ սրտի խամրած երազներ, ծառերից պոկւում էին թօշնած տերևները և խաւարի մէջ փոքրիկ հեծեծիւն արձակելով՝ ընկնում էին մեր գլուխների վրայ։

Անյոյս ու անդարձ մահերը երազների...

Մռայլ, լալկան աշուն էր։

Նա էր հեծկլտում խաւարի մէջ, նա էր սօսափում անտառի ծառերը, նա էր փսփսում չոր տերևների մէջ յոգնած, ուժասպառ միջատների հետ, որոնք նոյնպէս գնում էին մեռնելու մի փչակում, մի խորշում, կամ հիւանդ ծառի պոկւած, կծկւած կեղևի տակ։

Եւ գայլերը ոռնում էին։

Նրանց մռնչիւնը՝ մերթ սպառնալի, որպէս հեռաւոր արհաւիրքի որոտ, մերթ ողբագին,

որպէս անյոյս կատաղութեան հեկեկանք, ձգւում, տարածւում էր քնած ծառերի վրայ՝ և այն ժամանակ խաւարը մնչում էր, միջատների քսսոցը դադարում էր, գիշերը պահում էր իր շունչը և հեռում մեղմիւ, վախկոտ, անձայն։

Կրակը վառւում էր ճարճատելով, բոցերը երերւում էին, հազիւ լուսաւորելով մօտիկ ծառերի բները, և նրանց ցոլքերը դողդողալով քսւում էին թանձր, անյոյս խաւարին վախեցած մանկան աչքերով, որ նայում է մռայլ հեռուն և սիրտ չի անում առաջ շարժւել, անյայտի ու խաւարի սոսկումով բռնւած։

Կրակի մի կողմում, լայն եափունջու մէջ փաթաթւած, հանդարտ քնած էր իմ ընկերներից մէկը, հուժկու, գեղադէմ տղամարդ, որի միայն դէմքն էր երևում։

Միւս ընկերս՝ մի վտիտ, ջլուտ երիտասարդ, նստած էր իմ դէմ ու դէմ և անդադար փայտի կտորներ էր նետում կրակի վրայ։ Նա նոր էր փախել բանտից, և մենք վերսկսել էինք մեր խենթ, արկածալից կեանքը անտառներում, ձորերում, լեռներում, միշտ ազատ և միշտ փախստական։

Ծնկները գրկած և աչքերն անթարթ՝ նա նայում էր կրակին թախծոտ, մտախոհ հայեացքով, և կարծես կարդում էր բոցերի լեզուն, դիտում էր նրանց շարժումները և, երբ փայտը ճարճատելով մոխիր էր կտրում, վերցնում էր նորը, ձգում կրակի մէջ և կրկին

ծնկները գրկում, կրկին խոհուն հայեացքը սևեռում բոցերին։

Լուռ էինք։

Գայլերը վերստին ոռնացին, զիլ, ահաւոր. նրանք երևի դժգոհ էին մեր կրակից և զայրոյթով թափառում էին մեր շուրջը աւելի և աւելի մօտենալով։

—Լսում ես, ասաց նա, ինչ անախորժ է։

—Կրակից են վախենում, պատասխանեցի։

—Չէ, նեղ է աշխարհը նոյն իսկ գազանների համար. նզովւած աշխարհ...

Ես զգացի, որ նրա հոգին կրծում է մի ուժեղ, մի մութ վիշտ։ Դէմքը գունատ էր, և բոցերի փայլը նրան տալիս էր ուրուականի արտայայտութիւն։

Խօսել չէր լինում։

—Գիտես, որ ես յոգնած եմ, շարունակեց նա, շատ յոգնած, այնպէս կուզէի քնել, խոր երկար քնով։

—Ինչը, ես կը հսկեմ, ասացի։

—Յիմար, ասաց նա մեղմ յանդիմանութեամբ, չես հասկանում ինձ. խոր, երկար քուն եմ ասում, յաւիտենական քուն...

—Ի՞նչ է պատահել քեզ։

—Յոգնած եմ, յոգնած։

—Բանտից յետոյ, ազատութեան մէջ...

—Հա, բանտից յետոյ, ազատութեան մէջ. ուհ, այդ ազատութիւնը, գիտես ինչպէս փախայ։

—Գիտեմ, որ փախել եմ, այդքանն ինձ բաւական է, մնացածն ի՞նչ արժէք ունի։

—Հէնց մնացածն է հետաքրքիր, միամիտ մարդ, զարհուրելի է, զարհուրելի. հաւատա՛, ընկեր, ազատութիւն կայ, որ բանտից նեղ է. լսիր պատմեմ քեզ և ասա՛ քո հեղինակաւորը, քո անողորմ վճիռը. ասա, ես ոճրագործ եմ, թէ ոչ։

Գայլերը ոռնացին վերստին.

—Լսո՞ւմ ես, իմ ազատութեան յուզարկաւորութիւնն են կատարում գաղանները, և նրանց երգը նոյնն է՝ «աշխարհը նե՛ղ է, նե՛ղ է, նե՛ղ է»... Գիտե՞ս, մօրս երկունքը ձախորդ է եղել, և խանձարուրիս վրայ անէծքն է թառել։

—Այս գիշեր դու տարօրինակ ես, դու...

—Լսիր և մի ընդհատիր ինձ։ Ես միշտ գիտէի, որ աշխարհը նեղ է և արիւն-արցունքով լեցուն, ցաւը եռում է ամէն կողմ, և ինձ միշտ թւում էր, թէ նա պիտի պայթի այն աշխարհը, և երբ պայթի, նրանից կը ծնուի նորը, ուր տառապանքն աւելի նուազ և ժպիտն աւելի փարթամ կը լինի։

Այդպէս էի մտածում և երազում էի։

Իմ երազնե՛րը...

Նրանց մէջ տեղ ունէին բոլոր նրանք, որոնք ճիլուած հսկայական ցաւի տակ, սողում են, տնքում և ապրում են սոսկ, որպէս շաղախ ուրիշների, հզօրների երջանկութիւնների համար։

Ես հպարտ էի իմ երազներով, հպարտ ու յանդուգն. ինձ թւում էր, թէ տիեզերքն եմ ընդգրկում, և իմ խոհերը մուրճեր են, որոնց տակ պիտի խորտակւի բոլորը, ինչի վրայ բարձրանում է արիւնի ու արցունքի հրէշաւոր շէնքը։

Բռնուել էի երկրորդ անգամ խիստ վտանգաւոր պարագաներում։ Զինուորական-դաշտային դատարան, կախաղան, որպէս արիւնոտ կօշմար՝ խեղդում էին ինձ։ Ինքս ինձ ասում էի, որ պայքարի գեղեցկութիւնը յաղթանակի մէջ է. նահատակի փայլուն լուսապսակը թող տան՝ ում ուզում են, իսկ ես պիտի փախչեմ քանտից, ինչ գնով և լինի, թէկուզ էլի հազար կամարներ բարձրանան գլխիս աւելի կուռ, աւելի մռայլ ու հաստաբետոն։

Անքուն էի։

Լուռ էր բանտում.

Մերթ ընդ մերթ լսւում էր որ և է բանտարկեալի շղթաների շառաչիւնը, նզովւած ու ժանգոտ մետաղը հաջում էր իր զոհի վրայ և նրա ոտները կրծոտում. այդ ժամանակ միջանցքում հսկող զինուորը կանգ էր առնում մի վայրկեան, ականջ դնում, ապա շարունակում քայլել յետ ուշառաջ միևնոյն գծով, միևնոյն համաչափ, ծանր քայլածքով։ Նրա ոտնաձայնը հնչւում էր իմ ականջում, որպէս անորոշ դրնդիւն. ինձ զբաղեցնողն այդ ժամին ոչ բաղդակից հարևաններիս շղթաների շռինդն էր, ոչ պահապանի միակերպ քայլ-

ւածքը։ Զափից դուրս շատ բան ունէի մտածելու, բայց գլխումս գաղափարների շփոթն ահագին էր, միտքս՝ ամուլ, և ես անկարող էի որ և է վճռական միջոցի վրայ կանգ առնել իմ փրկութեան համար ու սկսեցի մեքենայաբար համրել զինուորի քայլերը՝ «մէկ, երկու, երեք... տաս, տասներկու»... Զայրացայ ինքս ինձ վրայ. բանտարկութեանս առաջին օրից քանի-քանի անգամ համարել էի իրար յաջորդող բոլոր իմ պահապանների քայլերը, գիտէի, որ նրբանցքի մի ծայրից միւսը երեսուն երկու քայլ է, գիտէի, որ պահապանն ստիպւած է քայլել քունն ու ձանձրոյթը վանելու համար։ Գիտէի այդ բոլորը և դարձեալ ակամայ համարում էի ոտնաձայնները, երբ իմ կեանքի ու մահուան խնդիրն էր վճռւում։ Նզովեցի պահապանին և իր քայլերը ու վերսկսեցի մըտքերիս թելը, վճռաբար կրկնելով՝ «պէտք է փախչել, պէտք է փախչել, պայքարի գեղեցկութիւնը յաղթանակն է»։

Յիշեցի մօրս.

Խեղճ պառաւ մայր. կեանքի այս ահռելի ժխորի մէջ, ուր չարիքն ու բարին կատաղած բորենիների պէս իրար կոկորդ են կրծոտում, դու էլ ոտների տակ ընկար, քո ծեր օրերի բեռը շալակած։ Մի երկու օր առաջ ինձ այցելութեան էր եկել. սևազգեստ ու երկու տակ կռացած՝ նա սրբում էր իր մարած աչքերից քամող արցունքը և ասում ինքն իրան.

«Ես ծնկաչոք կը դամ մինչև դատարան,

կընկնեմ դատաւորների ոտները, կաղաչեմ, կաղերսեմ, որ իմ մին ու ճարին չը տանեն, չը խլեն ինձանից»։

—Հա, հա, մայրիկ, դու այդպէս կանես, քաջալերում էի ես նրան մի բանով մխիթարելու համար։

«Ծեր օրերիս էս սևը բերիր գլխիս, շարունակեց նա, քեզ ասում էի, որդի, ինձ խնայիր, իմ խեղճութեան ու անտէրութեանը մեղքացիր, տէրութեան դէմ»...

— Մայրիկ, հանգիստ մնայ, ընդհատեցի նրան, տեսնելով, որ պահապանների ներկայութեամբ անգիտակցաբար մեղադրում է ինձ. մայրիկ, ես մեղք չունիմ, այ կը տեսնես, կազատւեմ։

Նա հասկացաւ միտքս, անհանգստութեամբ շուրջը նայեց, աչքերը սրբեց.

«Վայ, քոռանամ ես, ցնդւած պառաւ եմ, ինքքս էլ չեմ իմանում, ինչ եմ դուրս տալիս. հա, ոտները կընկնեմ, կաղաչեմ, կը լամ, դու ինչ մեղք ունիս, որ չազատեն...

Խեղճ պառաւ...

Եւ նա հաւատացած էր, թէ իրեն կը լսեն, թէ նա իր արցունքով քարերը կը պատռի. ով կարող է դիմանալ, երբ մի մայր է լալիս։

Մօր արցունքը»...

Կրակի բոցերը նւազեցին, և խաւարը թանձրացաւ մեր շուրջը՝ ընկերս դարձեալ փայտեր շարեց կրակի վրայ, որոնք ճարճատե-

լով սկսեցին վառել. միւսը, մի բան մռմռաց քնի մէջ և շարունակեց խռնփալ, իսկ գայլերը բոցավառած կրակի փայլից վերստին ոռնացին աւելի զիլ, աւելի չարագուշակ ու կատաղի։

—Դու չՔս քնում։

— Ոչ, ասացի։

Եւ նա շարունակեց իր պատմութիւնը.

«Մի երկու օր յետոյ ինձ շղթայակապ պէտք է փոխադրէին նահանգական քաղաքը դատելու։ Պէտք էր փախչել ճանապարհին զինուորների ձեռքից, ուրիշ ճար չը կար։ Բայց ի՞նչպէս. ահա խեղդող հարցը, որի ծանրութեան տակ ընկճւում էր միտքս, ու հոգիս թակարդի մէջ բռնուած թռչունի նման թրպրտում էր ու տնքում։

«Մէկ, երկու, երեք... տաս...

Դարձեալ... զայրացած՝ բռունցքով խփեցի ճակատիս ու շուռ եկայ միւս կողքիս։ Երկաթէ մահճակալս ճռնչաց, շղթաներս շառաչեցին, և պահապանը կանգ առաւ իմ դրան առաջ։ Սպասում էի, թէ նա ըստ սովորութեան կը կանչի անողորմ ու շեշտ ձայնով։ «Զաղմկել, քնիր, ապա թէ ոչ...»։ Այսպէս են բոլոր պահապանները, մէկը միւսից անսիրտ։

Բայց այս անգամ պահապանը լուռ էր։

Երևի նա է, մտածեցի ես, իմ բարեկամը, միակը, որ հայհոյել չը գիտէր, որ իր պաշտօնի խստութեան մէջ պահել էր մի անոյշ մեղմութիւն, մանաւանդ զէպի ինձ։

— ՉՔս քնել, հարցրեց նա կամացուկ։

— Ո՛չ, ասացի։

— Մօրդ մասին ես մտածում երևի։

— Հա, նա այնպէս տառապում է։

— Խե՛ղճ պառաւ... և նա հեռացաւ ու շարունակեց գնալ-գալ, մէկ, երկու, երեք... տաս, տասներկու։

Մեր բարեկամութիւնն սկսւեց ինձ համար խիստ անսպասելի կերպով։ Ծեր մօրս առաջին այցելութեանը նա ներկայ էր, լուռ նայում էր նրա արցունքին, և նկատեցի, որ խիստ յուզւեց։ Երբ մայրս հեռացաւ, նա մօտեցաւ իմ դռնակի, և խօսում էր իր մօր մասին, որ հեռու հայրենիքում տարիներից ի վեր սպասում է իր գալստեանը։

— Տարաբախտաբար մեծ եղբայրս պահեստի զինուոր է, ասաց նա, և զէնքի է կանչւած։ Նա այժմ կուի դաշտումն է։ Այս անիծած պատերազմն էլ վերջ չի առնում. քանի՞ն ընկան... ի՞նչ լուրեր են գալիս. ո՞վ գիտէ, ի՞նչ է պատահելու. յետոյ եղբայրս կին ունի. խե՛ղճ մայր, ինչպէս են եօլա գնում. երկու կնամարդ, առանց տղամարդի, առանց օգնականի, աղքատ, անհող... ամենքն աղքատ են մեզ մօտ, ճ, այնպէ՞ս աղքատ, հող չը կայ...

Այս խօսակցութիւնը եղաւ մեր բարեկամութեան սկիզբը։ Այնուհետև իր պահպանութեան հերթին նա հեշտացնում էր իմ կապը արտաքին աշխարհի հետ. լուրեր էր տալիս դրսում անցած—դարձածից, պատերազմից. ես

խօսում էի իմ մօր վշտերից, բանտից ու շղթաներից, նա, իր զինուորութիւնից, իր եղբօրից ու հեռաւոր ընտանիքից։

— Է՜հ, ծանր է կեանքը, եղբայր, վերջացնում էր նա։

— Հա, ծանր է, պատասխանում էի։

— Բարի գիշեր, քնիր։

— Բարի գիշեր, եղբայր։

Եւ նա սկսում էր գնալ-գալ. ես համարում էի նրա քայլերը մինչև քսեմ։

Նա մի շիկահեր, միջահասակ երիտասարդ էր. պարանոցը մի փոքր թեք դէպի ձախ, որ նրան տալիս էր համեստ, նոյնիսկ խեղճ արտայայտութիւն։ Խօսում էր դանդաղութեամբ, համարեա կսկաղելով։ Ծոյլ շարժումներ ունէր, միշտ մտածկոտ անփայլ դէմք, որ մօտենում էր թախծոտի։ Ես այնպէս գրաւուած էի նրա բարի արտաքինով, այնպէս բարեկամ էի համարում ինձ, որ երբեմն տարօրինակ էր թւում ինձ նրան տեսնել իմ պահապանի դերում, հրացանը ձեռքին պատրաստ կրակելու, եթէ փախուստի ամենաչնչին փորձ անեմ։ Յաճախ նայում էի նրա աչքերի մեղմ, բարի արտայայտութեանը, անմեղութիւն բուրող նրա խեղճ դէմքին ու ինքս ինձ հարցնում էի՝ մի՞թէ այս մարդն ընդունակ է իր հրացանի փողն ուղղել առաջին պատահած բանտարկեալի կրծքին, որին չի ճանաչում, որի յանցագործ լինել կամ չը լինելը նա չի կարող իմանալ։

Այս մարդու արտաքինի և նրան վերապահուած արիւնոտ գործողութեան մէջ եղած հակասութիւնն ինձ թւում էր հրէշաւոր, այլանդակ, և ես չէի դադարում մտածել այդ գարշելի հակասութեան մասին, ուր սնունդ է առնում անգիտակից ոճիրը։

Յաճախ երբ նա խօսում էր ինձ հետ, ես չէի լսում, այլ նայում էի աչքերին և նոյն միտքը դառնում էր իմ գլխում, ինչպէս մի ձանձրալի յանգերգ՝ «եթէ փախչեմ, սա ինձ կը խփի՞, թէ չի խփի, կը խփի՞, թէ չի խփի...» Ես այնպէս կուզէի այդ իմանալ։ Հարցնելն անյարմար էր. դիպուածն ինձ օգնեց։ Մի գիշեր բանտում ահակոչ բարձրացաւ, պահապանը մի քանի անգամ հրացան արձակեց. նրան պատասխանեցին բանտի միւս մասերից հրացանների որոտով. յետոյ աղմուկ, խօսակցութիւն, հայհոյանք, զայրացկոտ հրամաններ, շղթաների ձայն, դռների դղրդոց, տնքոց, հեծեծանք, ապա ամեն ինչ լռեց, ասես ոչինչ պատահած չը լինէր։ Յաջորդ օրը շատ բանտարկեալների ոտները շղթայեցին, ի թիւս որոնց՝ իմ։ Յետոյ իմացայ, որ երկու բանտարկեալ փախուստի փորձ են արել, քանդելով առաստաղը, բայց անյաջող։

Երբ իմ բարեկամ պահապանը իր հերթին եկաւ, նա նայեց շղթաներին ու ցաւ յայտնեց։

Խօսք եղաւ փախչողների մասին.

— Սպանուած են, հարցրի ես.

— Մէկն սպանուած է, միւսը՝ ծանր վիրաւոր. յանդուգն, խելագար բան է, եղբայր... փախչել բանտից, շարունակեց նա, նստել ես, ուրեմն օրէնք է... Նստիր, դատաստան կայ. թէ չէ փախչել. այնպէս չէ՞, դէ ի հարկէ կը խփեն, և խփողը պարգև կը ստանայ. պարտք է, եղբայր, զինուորի պարտք, հօրդ էլ չես կարող խնայել... հա, այդպէս է, եղբայր, նստացրել են... ուրեմն մի բան կայ, նստիր և սպասիր, օրէնք է...

Եւ նա ասում էր այս բոլորը ոգևորուած, համարեա զայրոյթով, կարծես նոյն իսկ ցաւում էր, որ ինքը չի եղել խփողը։ Ես զարմացած նայում էի նրա դէմքին ու ճանաչել չէի կարողանում իմ բարի, իմ խեղճ բարեկամին։ Սա նոյն մարդն էր, որ մի քանի օր առաջ քիչ մնաց արտասուէր, երբ մօրս արցունքը տեսաւ։ Իմ առաջ կանգնած այս զինուորի արտաքինի տակ մի մարդ չէր, այլ երկու, և զարհուրելին այն էր, որ նրանց մէջ կռիւ չը կար։ Նոյն այդ աչքերը, որոնք այնքան բարի, այնպէս մեղմ արտայայտութիւն ունէին, առանց յուզմունքի նշան կը բռնէին ինձ, եթէ ես էլ փախչելու փոքրիկ փորձ անէի։ Այժմ այդ ինձ համար պարզ էր՝ ինչպէս այն, որ ես բանտումն էի։

Ահա այդ զինուորն էր, որ գիշերը մօտեցաւ դրանս, կարեկցութեան երկու խօսք ասաց,

ապա հեռացաւ, թողնելով, որ ես որոճամ իմ փախուստի ծրագիրը։

«Պէտք է փախչել, պէտք է փախչել»։

Բայց ի՞նչպէս...

Խեղդող, սրտաշուկ հարց, որ հազար ձևով դառնում էր գլխումս։

Թէև աշուն էր, բայց բանտում տօթ էր, նեղլիկ երկաթապատ լուսամուտից օդը չէր փոխւում։ Առաստաղը ճնշում էր, կարծես կամաց կամաց կախւում ցածրանում էր ինձ խեղդելու համար։ Ճակատս տաքանում էր, ես կարծես տենդում էի, մտքերս բոց դարձած՝ վառւում էին գանգիս մէջ, նստեցի գլուխս ձեռներիս մէջ առայ յուսահատաբար։

Հոգիս դժոխք էր։

Պահապանը կրկին մօտեցաւ դրանս։

— Դու դեռ անքո՞ւն ես։

— Հա, անքուն եմ, շոգ է, յետոյ վատ երազները...

— Վատ երազները, կրկնեց նա վշտոտ, դողդոջուն ձայնով, քնիր, եղբայր, քնիր, կեանքն անիծած է. օճ...

Նրա խօսքի շեշտը անսովոր ցաւ ունէր, զգացի, որ նա արտասուելու չափ տխուր է։

— Վատ լուր ունիս տնից, հարցրի։

— Եղբայրս սպանուած է... մայրս է գրում... խեղճ պառաւ... քնիր, եղբայր, քնիր, կեանքն անիծած է...

Նա էլ շարունակել չը կարողացաւ, մեղմիւ հեծկլտաց, դռնից հեռացաւ և սկսեց քայլել

նոյն համաչափ քայլուածքով յետ ու առաջ, և նրա ոտնաձայնը չոր էր ու անողորմ, ինչպէս միշտ։ Ահագին վիշտը կրում էր թիկունքին, ինչպէս իր ծանր հրացանը, և մէկը միւսին ասես բնաւ չէր խանգարում։

Մոռացայ իմ ցաւը և մտածում էի բարեկամ զինուորի ցաւի մասին։

Մի մութ ու ահաւոր կապ կայ այդ ոտնաձայնի, զինուորի վշտի, ռազմի դաշտում ընկած, անծանօթ մարտիկի և իմ բանտի շղթաների մէջ։ Չէի կարող ասել, թէ դա ինչ կապ է, ինչու է զբաղեցնում ինձ մի անծանօթ դիակ, որ ընկած է հեռու, անծանօթ հորիզոնների տակ իր պէս հազար հազարների հետ։ Ինձ թւում էր, որ և՛ իմ բանտն ու շղթաները, և՛ այն դաժան, արիւնոտ մահը, որ այնքան երիտասարդ կեանքեր է հնձում պատերազմի դաշտում, միևնոյն ծագումը, միևնոյն աղբիւրն ունին։

Եւ այս մարդը լալիս էր, ցաւում էր մէկի համար, միայն մէկի. բայց ուրիշ հազարները նոյնպէս ընկել են նոյն գնդակով, նոյն դաշտերում, նոյն պատճառով և նոյնպէս արժանի են կարեկցութեան, արցունքի։

Աշխարհում այնպէս շատ են արցունքի արժանիները, բոլոր նրանք, որոնք խլւում են կեանքի մեծ ճանապարհներին այլ ևս երբէք չը բարձրանալու համար։

Եւ զինուորը գնում էր գալիս ու հեծկլտում. նա էլ էր զարկուած, ինչպէս և՛ այն խեղճ,

անտէր պառաւը, որ հեռաւոր երկնքի տակ, մի աւերակ խրճիթում նոյնպէս հեծկլտում էր անյոյս, որպէս բունաւոր այրի թռչուն։ Եւ յետոյ եթէ փորձեմ փախչել սա, այս վշտից խորտակուած զինուորը, ինձ կը գնդակահարի. հէնց այս վայրկեանիս կը դադարի հեծկլտալ ու արցունքոտ աչքով նշան կը բռնի, կը զարկի միևնոյն գնդակով և՛ ինձ, և՛ մօրս, և բոլոր խենթ երազներս կը մարեն նրա բութ անգիտակցութեան մի նզովուած հարուածով։

Մութ, կորած մի արարած է, որոնցով լի է աշխարհը, բայց էլի մարդ է, գիտէ խորը զգալ մերձաւորի վիշտը. հեռաւոր եղբօր մահուան կսկիծը գիշատիչ թռչունի պէս հորիզոններ է կտրել և եկել սրա սիրտը քրքրում է։ Եւ այդ կիզիչ ցաւը, սեփական վիշտը նրան ոչինչ չի ասում, իր խաւար գլխի ու խղճուկ սրտի մէջ նա անջատ, ուրոյն տեղ է բռնել՝ միանգամայն դուրս աշխարհի հսկայական չարիքից։

Լալիս է, բայց եթէ փախչեմ՝ առանց արցունքը սրբելու կը զարկի, որովհետև նրան է յանձնուած հսկել, որ իմ շղթաները շատ բարձր չը շառաչեն, որ բանտը դատարանի լինի ինձ պէս հազարների յոյսերին ու բոց տենչերին։

Ո՜հ կեանքը։

Նզովքի, արեան ու արցունքի ստրուկ է այն, որի վրայ թառել է բութ անգիտակցութիւնը հսկայ բուի պէս, թառել է և վոյ-վոյ անում, մինչդեռ իր զոհերը խեղդոտում, տրորում,

7/31 1922

զարկում են իրար, արիւնոտւում ու ընկնում առանց իմանալու թէ ինչու։

Դժոխք...

Պահապանը գնում էր գալիս անընդհատ, միակերպ. «մէկ, երկու, երեք...» Գլուխս ծանրացաւ, ընկայ կոշտ անկողնի վրայ. շղթաները շառաչեցին խուլ ու այլանդակ ձևով. փակեցի աչքերս և դարձեալ մտածում էի պատերազմի դաշտում պառկած, հազար հազար արիւնոտ դիակների մասին, որոնց վրայ պտտւում էին գիշակեր թռչունները, կամ լալկան ամպերն էին գալիս մի քանի կաթիլ արցունք թափում և անցնում։

Եւ ոյսպէս ես չը կտրողացայ...»

Նրա խօսքն ընդհատուեց ոտների թփթփոցով, որ լսուեց հէնց մեր թիկունքին բոլորովին մօտիկ և նոյն վայրկեանին երկու դայլ, իրար կրծոտելով ու քաշքշելով, կատաղի ոստիւններով անցան մեր կողքով։ Ընկերս զայրացած խլեց հրացանը, ուղղեց նրանց յետևից և արձակեց։ Դայլը կաղկանձեց, սուր, անօրինակ ճիչ արձակեց ու լռեց. մեր քնած ընկերը զարթնեց, վեր թռաւ, ձեռքը դէպի հրացանը տարաւ։

—Ինիր, քնիր, ասաց հրացան արձակողը. ես էի, դայլին խփեցի, քնիր։

Միւսը մի բան մոմոաց քթի տակ, հրացանը թողեց, կրկին փաթաթուեց եափունջու մէջ և խկոյն քնեց։

—Դայլն ընկաւ, ասացի ես։

«Անկասկած, նրա կաղկանձոցը օրհասական ճիչ էր։ Եւ լաւ եղաւ, աշխարհում մի տեղ բացուեց, ես քեզ ասացի, որ նեղ է, նեղ է, ամենիս համար նեղ է։ Եւ նա տարօրինակ կերպով ծիծաղեց, ապա կրակի վրայ փայտեր շարեց ու շարունակեց.

«Ես չը կարողացայ փախուստի մէջ վճռական միջոց գտնել, թողեցի պատահականութեան, կոյր դիպուածին։

Եւ չը սխալուեցի։

Բարեկամ զինուորի ձեռքով դրսից մի տոմսակ ստացայ. բովանդակութիւնը հետևեալն էր. «վաղը քեզ տանելու են. աշխատիր գետափի մօտ անտառում նստել հանգստանալու»։

Տոմսակը պատռեցի, բայց այս մի քանի բառերը կարծես շիկացած երկաթով տպուեցին ուղեղիս վրայ, և ես անդադար կրկնում էի ինքս ինձ։ Ո՞վ էր գրել—չը գիտէի, ի՞նչ էր ծրագրուած, նոյնպէս հասկանալ չէի կարողանում. մի բան միայն պարզ էր, որ ինձ ազատելու մասին դրսում մտածել են ընկերներս, և որ գետափին, անտառում նստելը վճռական նշանակութիւն կարող է ունենալ իմ փրկութեան համար։

Վերջապէս ինձ տանում էին՝ կամ դէպի մահ, կամ դէպի փրկութիւն։ Երկու զինուորի հսկողութեամբ և գլուխս սև մտքերով պաշարուած, ես քաշ էի տալիս իմ շղթաները յամրաքայլ։ Մի անսպասելի զուգադիպութեամբ պահապաններից մէկը դարձեալ իմ

բարեկամն էր, շիկահեր, տխրադէմ երիտասարդը։ Միւսը, մի բարձրահասակ, խոժոռ մարդ, որի իւրաքանչիւր շարժումը մանաւանդ դաժան հայեացքը վկայում էր նրա խստասրտութիւնը։ Սա չէր ինձ հետաքրքրողը, և ես նոյն իսկ ուրախ էի, որ առում եմ այս մարդուն առանց լուրջ պատճառի։ Ինձ զբաղեցնողը իմ բարեկամն էր. փոխանակ ուրախանալու, որ նա է ինձ ընկերանալու, փոքրիկ դող անցաւ մարմնովս, երբ նրան տեսայ։ Եթէ հնար լինէր, կը ճչայի. «Էյ բարեկամ, աղաչում եմ քեզ, մի ընկերացիր ինձ»։ Ես նման էի այն ձիուն, որ ճանապարհի եզրին ընկած մի մութ զանգւանից վախենում է ու ծառանում, աշխատելով հեռից անցնել. բայց տերը քշում է նրան հէնց դէպի սոսկալի առարկան։ Ես վախենում էի այս բարեկամի ներկայութիւնից, անորոշ կերպով զգում էի այդ վախի շարժառիթը, առանց սակայն պարզ կերպով ինձ հաշիւ տալու թէ ինչ էր այն։ Մէկ չէ՞, նա թէ՞ մի ուրիշը. բոլորն էլ գընդակի կը բռնեն, եթէ փախչելու փորձ անեմ. սա գոնէ ճանապարհին աւելի կարեկից կը լինի դէպի իմ ծանր կացութիւնը, հրացանի կոթով թիկունքիս չի հարւածի, եթէ դանդաղեմ կամ յոգնեմ։ Մտածում էի այս բոլորը, բայց և այնպէս կուզէի, որ նա չը լինէր, այլ մի ուրիշը, անծանօթը, որ ինձանից ոչինչ չուներ, և որից ես էլ ոչինչ չունէի։

Ճանապարհը երկար էր ու մանուածապատ.

մենք անցնում էինք դաշտերով, ձորերով ու անտառներով։ Աշնան սկիզբն էր։ Թռչունները ճախրում էին երկնքի տակ մեծամեծ երամներով՝ ազատ ու անհոգ, և նրանց խառնիխուռն ճիչերը իմ շղթաների շռինդի հետ կազմում էին մի սրտմաշուկ, հոգեկան համերգ։ Կեանքի խօլ աղաղակն է այս,—մտածում էի ես,—ցաւերի ու ցնծութեան հնչիւններից հիւսւած։

Աշնան առաջին նշանը, հատ հատ դեղնած տերևներ երևում էին այստեղ, այնտեղ։ Փչում էր մոլորւած քամին, քշում, իրար էր խառնում մեռած տերևները, և նրանք հնազանդ ու խեղճ, լալագին խշշոցով տարւում էին գետնի երեսից, առանց իմանալու թէ ո՞ւր և ինչո՞ւ։

Կռունկների աղեղնաձև մի երամ վերևից կղզաց ու անցաւ։ Ճանապարհից քիչ հեռու մի խումբ անգղեր կեռ, ուժեղ կտուցներով քրքրում էին մի դիակ. իմ շղթաների ձայնից նրանք բարձրացան դժգոհ ու կատաղի, ապացած իջան շարունակելու իրենց նողկալի ճաշը։ Աշխատաւոր գիւղացիներ կային ցելերում. գլուխները բարձրացրին ու նայեցին մեզ մի վայրկեան այն սովորական բութ անտարբերութեամբ, որ յատուկ է հողի վրայ կռացած ճակատներին, ապա վերսկսեցին իրանց դանդաղ աշխատանքը։

Երկնքի տակ լողում էին կտոր կտոր ամպեր, նօսր ու անձև. նրանք տարւում էին

այնպիսի դանդաղութեամբ, ասես համարում էին իմ յոգնած քայլերը, և ականջ դնում իմ շղթաների շռինդին։ Նրանց յեղյեղուկ ու այլանդակ սուերները թուխ շղարշի պէս մի վայրկեան պարուրում էին մեզ, ապա հանդարտ անցնում սողալով դաշտերի ու անտառների վրայով որպէս դարանակալ դաւադիրներ։ Ամպերի այդ գաղտագողի շարժումները, այդ զգուշաւոր ընթացքը այնպէս նման էին մտքերին, որոնք նոյնպէս ծածուկ, նոյնպէս անձև դառնում էին իմ գլխում խոլ երամով։

Եւ այդ մտքերը... բոլորն էլ իմ փախուստի շուրջն էին պտտւում։ Ի՞նչ է սպասում ինձ, ի՞նչ էին նշանակում խորհրդաւոր տոմսակի մի քանի բառերը, ի՞նչպէս անել, որ կէտ առ կէտ կարողանամ իրագործել գաղտնի հրահանգը առանց ինձ մատնելու։

Հեռուից լսւեց գետի ձայնը. մօտ էինք, և սիրտս թունդ ելաւ. քիչ յետոյ մեր ճանապարհն անցնում էր նրա ափերով։ Մեզնից դէպի աջ, մի անդնդախոր ձորի մէջ հոսում էր նա փրփրած ու կատաղի։ Մացառներն ու ծառերը թաղցնում էին նրա տեսքը, լսւում էր ձայնը միայն, մի ահագին որոտ։ Լեռնային գետակ էր, սրընթաց իջնում էր բարձրութիւններից, կատաղաբար զարկւում ափերին և մռմռում ու կրծոտում իր կողերը սղմող ժայռերը։ Մենք երեքով էլ նայում էինք դէպի աջ, դէպի բարձր քարափը, որից ներքև դեռն էր մռնչում, ինչպէս կաշկանդւած վիշապ։ Ինչու էին նայում իմ պահապանները, չը գիտեմ, բայց ես դիտում էի, ամեն վայրկեան սպասելով, թէ մի բան պիտի պատահի, մի զարհուրելի անակնկալ։ Անորոշի, մութ դիպւածի սոսկումը բռնել էր ինձ, ծնկներս ծալւում էին ակամայ, և գետի որոտը օրօրում էր ինձ, որպէս անհունի անհասկանալի աղաղակ։

Առաջ շարժւեցինք. ճանապարհը նախ հեռացաւ գետափից, ապայ պտոյտ տալով ցածացաւ դէպի ձորը։ Անտառի մէջ էինք։ Յուզմունքս իր գագաթնակէտին հասաւ. այստեղ պէտք էր «հանգստանալ»։ Ճիգ էի գործ դնում ակնարկի խաղաղութեամբ խնդրել պահապաններիս մի քանի րոպէի հանգիստ, բայց ամեն անգամ, որ փորձում էի բերանս բանալ, ինձ թւում էր, թէ ձայնս, խօսքիս շեշտն ինձ կը մատնի, և շրթունքներս կծում էի չը խօսելու համար։

Էլ քայլելու ոյժ չը կար։

—Յոգնած ես, հարցրեց բարեկամ զինուորը։

—Այո, շատ յոգնած եմ, հազիւ կարողացայ ասել և իսկոյն լռեցի, որովհետև դողացող ձայնս ինձ վախեցրեց։

—Նստենք մի փոքր հանգստանալու, ասաց նա, դուրս գալով ճանապարհից և առաջանալով դէպի սուերախիտ ծառը։ Երեի ինքն էլ էր յոգնած, իմ բարեկամը։ Նա թեք ընկաւ իմ կողքին, իսկ միւսը՝ հրացանն ուսին շարունակեց քայլել իմ առաջից յետ ու առաջ։ Ես գաղտագողի կերպով նայում էի չորս կողմը։

աշխատում էի հայեացքով թափանցել ծառերի թանձր թաւուտների խորը, պրպտել ստուերները։ Ոչինչ, ոչինչ չէր նկատւում։ Ականջս սրած, սպասում էի որև է ձայնի, որև է շշուկի, ոչինչ չէր լսւում։ Մթթէ ստացած տումսակը մի անողորմ հեգնութիւն էր իմ դժոխային վիճակի, կամ գուցէ ծրագիրը չի յաջողւել։ Կանգուն զինուորը նոյնպէս մերթ նայում էր իր շուրջը, մերթ ինձ, ապա կանգնում մի վայրկեան ականջ դնում և կրկին քայլում։

—Գնանք, բաւական է, ասաց նա, հազիւ հասնենք ժամանակին։

—Էհ, թող հանգստանանք, պատասխանեց միւսը և աւելի յարմար ձգւեց կանաչ խոտերի վրայ։

Յուսահատութիւնը խեղդում էր ինձ. բերանս չորանում էր անօրինակ յուզմունքից, թիկունքիս վրայից մի ցուրտ բան էր խաղում, ինչպէս սողուն. ես դողում էի, վայրկեանը փախչում էր արագութեամբ, և նրա հետ նոյն արագութեամբ մօտենում էր իմ անդառնալի կորուստը։

—Գնանք, վերստին կրկնեց կանգնած պահապանը այս անգամ աւելի վճռական, աւելի խիստ շեշտով։

Եւ նոյն վայրկենին անտառի միջից լսւեց մի որոտ։ Ես տեսայ թէ ինչպէս խօսող պահապանը կանգնած տեղում վեր ցատկեց, ճչաց անօրինակ ձայնով, ձեռքի հրացանը

ճօճեց օդի մէջ և ընկաւ, ինչպէս խորտակւած ծառ։ Կողքիս պառկած հարևանս ցնցւեց, խլեց հրացանը, պատրաստւում էր ոտքի ելնել, երբ ես առանց ինձ հաշիւ տալու զոյգ ձեռքով նրա կոկորդը բռնեցի։ Չէի մտածել, չէի ծրագրել այդ յանգուգն, այդ յուսահատ գործողութիւնը, միայն երբ տեսայ առաջինի ընկնելը, բնազդօրէն երկրորդին բռնեցի իմ երկաթէ մատներով։ Սկսւեց կատաղի կռիւ իմ և նրա մէջ, նա ներքևից ես վերևից. մենք փաթաթւեցինք իրար զայրացած օձերի պէս և ատամների կրճտոցով աշխատում էինք ոչնչացնել իրար։ Ես էլ ոչինչ չէի տեսնում, գիտէի մի բան, որ պէտք է խեղդել իմ տակն ընկած այն մարդուն, որ իմ մահն էր, իմ կախաղանը, իմ ճակատագիրը։ Ես զգում էի իմ մատների տակ նրա պարանոցի ոսկորների ճարճատիւնը, ես տեսնում էի նրա շրթունքների կարմիր փրփուրը, նրա զարհուրանքից ու կատաղութիւնից չռած աչքերը, և սեղմում էի ու սեղմում նրա կոկորդը։ Նա խըռխռում էր, եղունգներով ծւատում իմ երեսը, չանգռում աչքերս, փորձում էր բռնել կոկորդս. իզուր. ես ատամներով կրծոտում էի նրա մատների մասերը, պլոկեցի նրա կաշին, որ արիւնոտ ու զազրելի լաթի պէս կախկիւեց ձեռքերի վրայ։ Տասն անգամ բազուկներս թուլացան նրա հզօր ճիչերի առաջ, և կրկին յուսահատ թափով բռնեցի կոկորդը, մատ-

ներս թաղելով նրա պարանոցի մէջ ինչպէս երկաթէ ճիրաններ։

Զարհուրելի՝ պայքարը մօտենում էր վախճանին, հակառակորդիս խռխռոցը նւազում էր, և կամաց կամաց նրա բազուկները թուլանում էին ու կախւում, ռունգներից ու բերանից արիւնը հոսում էր թանձր ու գարշելի, ճռթռած աչքերը մնացել էին անթարթ սոսկումի պատկերով, իսկ ես շարունակում էի սղմել, սղմել նրա կոկորդը բոլոր ուժով։

Մէկը բռնեց թեւիս։

Վեր նայեցի սասանւած։

—Մեռած է, թող, ասաց մի ձայն։ Գլխիս վրայ կանգնած էր մի մարդ, նա էր դարանամուտ գնդակի բռնել առաջին պահապանին։ Նայեցի նրան և չէի ճանաչում. գլուխս մթագնած, աչքերս շաղւած, ես հեւում էի և չէի հասկանում, թէ ինչ է պատահել ինձ։ Տեսնում էի միայն իմ առաջն ընկած մի հատիկ դիակը և չէի իմանում, թէ ինչու այսպէս եղաւ։

—Լսիր, ասաց իմ փրկիչը, ինչ ես քարացել, կորցնելու ժամանակ չը կայ, վեր կաց ու անտառը մտիր։ Այս դիակները պէտք է հեռացնել ճանապարհից։

Ես ոյժ չունէի, ես մտածում էի, ես մեռնում էի. ինձ թւում էր, թէ ես էլ չը կամ, ոչնչացած, շոգիացած եմ։ Ապա ես տեսայ, թէ ինչպէս նա նախ մէկ, ապա միւս դիակը քաշեցին մի տարաւ անտառի խորքը և կրկին յետ եկաւ ինձ մօտ։

—Վեր կաց, ասում եմ. ապուշ է կտրել։

—Խփիր ինձ հրացանով, ասացի, ոյժ չունիմ։

Ես զգացի նրա հուժկու բազուկները, որոնք անցան թեւերիս տակ և քիչ յետոյ անտառի խորքումն էինք, այնտեղ, ուր ընկած էին դիակները։ Ինչու. ինքս էլ չը գիտեմ, բայց նստեցի իմ բարեկամ զինւորի դիակի մօտ, անծայր լքումը վրաս եկաւ, ու զգացի, որ անկարող եմ բաժանւել։

Անտառի խորքից դուրս թռաւ մի եղնիկ, մի գեղանի արարած. նա կանգնեց ականջները խլշած, իր խոշոր, սիրուն աչքերով մի վայրկեան նայեց դէպի մեզ, դէպի դիակներն ու մարդասպանները, և կարծես հասկանալով, թէ ինչ է կատարւել, շեշտակի փախաւ դէպի հակառակ կողմը, անիծելով և՛ մարդուն, և՛ աշխարհը։

Հեռու, հեռու լսւեց մի կառքի զանգակի ձայն, շուտով ծառերի արանքից տեսնւեց ճանապարհի վրայ մի քառաձի կառք և մէջը մի ուրախ զոյգ—մի տղամարդ և մի կին, երկուսն էլ ջահիլ ու կենսուրախ. նրանք կողք կողքի սղմւած՝ խօսում էին ու ծիծաղում, ջահիլ կինը ձեռքի կանաչ ոստով խփում էր երիտասարդի դէմքին, և երկսով էլ քրքջում էին։ Կառապանը նոյնպէս ուրախ, նոյնպէս անհոգ սուլում էր ձիերին, շրխկացնելով մտրակը։

Դեռ երբէք կեանքն իր վայելքներով այդ

աստիճան չէր զայրացրել ինձ. ես զգացի, որ ընդունակ եմ մեր դարանից դուրս ընկնել, երեքին էլ խողխողել այդ գեղեցիկ ձիերի հետ։

Կառքն անցաւ սրարշաւ. անտառում վերստին լռութիւն տիրեց։ Մնացինք մենակ մեր զոհերի և մեր ոճրի հետ։ Ընկերս վաղուց էր խարտոցել շղթաները, բայց ես չէի էլ մտածում ոտքի ելնել, կարծես կապած էի այդ դիակներին, կամ աւելի ճիշտ՝ դրանցից մէկին և փախչել չեմ կարող։ Նայում էի միայն մէկին, իմ դժբախտ բարեկամին. նայում էի և մտածում այն խեղճ պառաւի մասին, որ հեռաւոր երկրում, ուր ամենքն էլ աղքատ են, ամենքը դժբախտ, լալիս է իր մի որդու համար, սգում է մէկի մահը, մինչդեռ նա պէտք է արցունքը կրկնապատկի այժմս և չը գիտէ, չը գիտէ... վերջին մահացու հարուածն է ստացել և չը գիտէ...

Եւ այս բոլոր արցունքն ու արիւնը նրա համար, որ ազատ լինեմ, և մայրս էլ կուրախանայ անշուշտ։ Այն միւսը՝ այն հեռաւոր, անծանօթ մայրը պիտի լայ, նրա զաւակը պիտի մեռնի օտար հորիզոնների տակ, որպէս զի ես ապրեմ, իմ մայրը խնդայ։

Ո՜ւհ, զարհուրելի հակասութիւնը կեանքի. երբ մէկը պիտի մեռնի, մէկ չէ՞, թէ ով. երբ մի մայր պիտի արցունք քամի մէկ չէ՞, թէ ով։

Նե՜ղ է, նե՜ղ է այս նզովւած աշխարհն ազատութեան համար։

—Գնանք, կրկնեց ընկերս։

Ես լուռ էի և չէի կարողանում հայեացքս պոկել բարեկամիս չոռած, արիւնոտ աչքերից, նրա կապտած դէմքից, նրա դուրս ընկած լեզուից, որի մէջ թաղւել էին ատամները։

Արևն իջաւ, իջաւ կամացուկ և ծածկւեց լեռների թիկունքում։ Վերջալոյսն այն երեկոյ աւելի արիւնոտ էր քան երբէք։ Մառախուղը կախւեց լեռների սուերների հետ։ Անտառը կամաց կամաց մթնեց. խաւարի հետ մէկտեղ սոսկումն իջաւ անտառի և մեր գլուխների վրայ։ Ծառերը սոսկւեցին, ինչպէս մի ահաւոր գաղտնիքի իրազեկ։ Գետակը մռնչում էր խուլ ձորում աւելի կատաղի, աւելի թափով։ Աստղերը մէկիկ մէկիկ փայլեցին երկնքում. նրանք սահում անցնում էին, և ամեն մէկն ասես աշխատում էր ծառերի արանքից նայել դէպի վար՝ այնտեղ, ուր չորս աչքեր ապակու պէս սառած՝ անշարժ յառած էին մնացել երկնքին, նայում էին, յաւիտենական մի հարց շրթունքներին քարացած։

Խաւարն ինձ ազատեց, դիակներն էլ չէի տեսնում. մէկ գետակն էր շարունակում իր ողբը, փրփրում, կատաղում ձորի մութ անդունդներում, ծեծում էր ծեծում ժայռերը մի փոքր ազատութեան համար, և այդ ազատութիւնը չը կար, չը կար, հարկաւոր էր ափերը խորտակել, աւերած ու մահ սփռելով ամեն կողմ։

Նո՛ւյնն էր, նո՛ւյնն էր, ազատութեան համար

աւերած ու ոչնչացուած, ամեն կողմ բնութեան մէջ, որի վրայ ծանրացել է մի հին անէծք։

—Գնանք, կրկնեց ընկերս տանջերոտ անգամ։

Եւ երբ շղթաներից ազատուած ոտքի ելայ, որ հեռանամ, զգացի որ բեռս աւելի ծանր է, աւելի դաժան, քան շղթայուած ժամանակ։

... Ու գայլերը ոռնում էին ինչպէս այս գիշեր։

Քայլում էի ընկերոջս յետևից, թիկունքիս դրել էի երկու ահաւոր ոճիր և մայրերի արցունքների ծանր բեռը. ծնկներս ծալւում էին այդ բեռի տակ, և հոգիս մխում էր մութ ցաւից։ Վերստին նստեցի ուժասպառ և գլուխս ձեռներիս մէջ առած՝ երկար, երկար արտասուում էի։

Ազատ էի և չը գիտէի, ուր տանել այդ ծանր, այդ դժնդակ ազատութիւնը։ Եւ թւում էր ինձ, թէ ես վաղուց հետէ մոլորուած եմ անտառում, կորել եմ գիշերւայ մթութեան մէջ անդառնալի կերպով, և՛ անտառ, և՛ գիշեր՝ երկուսն էլ ոչ սկիզբ ունեն, ոչ վախճան, կեանքի պէս սև, կեանքի պէս անհուն։

—Գնանք, յիմար, ինչ ես կնոջ պէս հեծկլտում, կրկնում էր ընկերս, առաջս կանգնած։

Զոր խոտերը խշխշացին, և նոյն վայրկենին մեր կողքով շեշտակի անցաւ սարսափից խենթացած մի նապաստակ, որին հալածում էր մի կատաղի գազան. «նոյնն է, նոյնն է, ա-

մենքը խեղդոտում, բզկտում, լափում են իրար», մռմռացի ես։ Վերստին ոտքի ելայ։

Պէտք էր քայլել, քայլել...

Գնում էի խարխափելով խաւարի մէջ, դիպչում էի ծառերին, վայր ընկնում, կրկին բարձրանում, կրկին ընկնում, գետակը շարունակում էր որոտալ, մռմռալ. խաւարը ճնշում էր իմ թիկունքը, ինչպէս ծով անէծքի մի թանձր բեռ, և գայլերը շարունակում էին ոռնալ մեր յետևից։

Պէտք էր քայլել, քայլել կեանքի մեծ ու ցաւոտ ճանապարհով։

Ես «ազատ էի»...

Նա վերջացրեց ու լռեց և մի փայտի կտորով խառնում էր կրակի մոխիրները։

—Բայց դու չասացիր, թէ ով էր այն ընկերը, որ այդպէս անակնկալ քեզ ազատեց։

—Ո՞վ էր այն ընկերը... ահա սա, եաֆունջու մէջ փաթաթուած այս մարդը, որ երկաթէ ջղեր ունի և բրոնզէ հոգի։ Տես ինչպէս քնած է, երանի՛ սրան...

Ես էլ կուզէի քնե՛լ քնե՛լ, որպէսզի էլ չը տեսնեմ այն ճոթռած աչքերը, այն քաշ ընկած լեզուն, այն կարմիր փրփուրով ծածկուած շրթունքները։ Օ՜ չի ապրւում, չի ապրւում, իմ ընկեր, այս դժոխքի աշխարհում ոչ ազատ, ոչ անազատ կեանքով, նե՛ղ է նե՛ղ է...

Արցունքները խեղդեցին նրա կոկորդը, նա գլուխը բռնեց ձեռների մէջ և հեկեկաց։

Կրակը վառեց ու մոխիր կարեց. խաւարը

բարձրացաւ մեր գլխի վրայ. ծառերը մեղմիւ փսփսում էին։

Ես լուռ էի, խօսք չէի գտնում մխիթարելու ընկերոջս։

Եւ գայլերը ոռնում էին...

ТИФЛИССКАГО СОВ. ГУБЕРНИИ БИБЛИОТЕКА

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հայաստանի Ազգային գրադարան
NL0431397